***Կարգապահական գործ թիվ ԿԳ-18006***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ-ի սեպտեմբերի 13-ի թիվ 260-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/204-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՀԱՅԱՐՓԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋՅԱՆԻՆ, ՄՈՒՇԵՂ ՇՈՒՇԱՆՅԱՆԻՆ, ԱՐԱՅԻԿ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սեդրակ Ասատրյանի, Խորհրդի անդամներ՝ Տիգրան Խուրշուդյանի, Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբաններ Հայարփի Սարգսյանին (արտոնագիր՝ թիվ 1926), Դավիթ Գյուրջյանին (արտոնագիր՝ թիվ 1897), Մուշեղ Շուշանյանին (արտոնագիր՝ 387), Արայիկ Պապիկյանին (արտոնագիր՝ 970) և Հարություն Բաղդասարյանին (արտոնագիր՝ 1187) (**այսուհետ նաև՝ Պատասխանողներ**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

***Պ Ա Ր Զ Ե Ց՝***

**1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

15.01.2018թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող)** դատավոր Ա. Օհանյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 09.01.2018թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱԴԴ/0090/01/17 քրեական գործով 09.01.2018թ. դատական նիստում փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի վարքագիծը գնահատելու և դատական սանկցիա կիրառելու հարցը քննարկելու վերաբերյալ դատական ակտ կայացնելու նպատակով Դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ՝ հայտարարելով, որ դատական ակտը կհրապարակվի 15 րոպեից: Ժամը 12:39-ին՝ հայտարարված ընդմիջումից հետո, Դատարանը վերադարձել է, հրապարակել է որոշումը, սակայն դատական նիստը շարունակելուն խոչընդոտել է պաշտպաններ Հայարփի Սարգսյանի, Դավիթ Գյուրջյանի,

Մուշեղ Շուշանյանի, Արայիկ Պապիկյանի և Հարություն Բաղդասարյանի բացակայությունը: Դատարանը պաշտպանների բացակայության պատճառները պարզելու և նրանց մասնակցությունը դատական նիստին ապահովելու համար ժամը 12:42-ից նիստն ընդմիջել է 10 րոպեով: Հայտարարված ընդմիջումից հետո՝ ժամը 13:07-ին գործի քննությունը շարունակելու համար Դատարանը վերադարձել է, սակայն նիստերի դահլիճ փաստաբաններ Հայարփի Սարգսյանը, Դավիթ Գյուրջյանը, Մուշեղ Շուշանյանը, Արայիկ Պապիկյանը և Հարություն Բաղդասարյանը չեն ներկայացել: Հայտարարված ընդմիջման ընթացքում Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի գրասենյակ ժամը 12:45-ին ստացվել է փաստաբաններ Հայարփի Սարգսյանի, Դավիթ Գյուրջյանի, Մուշեղ Շուշանյանի, Արայիկ Պապիկյանի և Հարություն Բաղդասարյանի կողմից կազմված միասնական դիմումը, որն աշխատակիցների կողմից ժամը 13:00-ին հանձնվել է դատավորի աշխատակազմին: Դիմումով փաստաբանները հայտնել են, որ՝ *(...) այսօր՝ 09.01.2018թ. դատական նիստի ժամանակ մեր պաշտպանյալները լքեցին դատական նիստերի դահլիճը՝ միաժամանակ հայտարարելով, որ հրաժարվում են մեր փաստաբանական ծառայություններից՝ դատական նիստի ժամանակ իրենց բացակայությամբ: Ուստի՝ չենք կարող և իրավասու չենք մասնակցել դատական նիստին*:

Որոշմամբ, գնահատելով պաշտպանների վարքագիծը, Դատարանը գտել է, որ վերջիններիս կողմից դատարանի գրասենյակ մուտքագրված դիմումով հիմնավորվում է, որ նրանք այդ ընթացքում գտնվել են դատարանի շենքում և դիտավորություն դրսևորելով նիստերի դահլիճ չեն մտել, հետևաբար նրանք դատարան ներկայանալուց խուսափել են չարամտորեն: Դատարանը գտել է, որ փաստաբաններն անբարեխիղճ են օգտվել իրենց դատավարական իրավունքներից, անհարգելի չեն կատարել իրենց դատավարական պարտականությունները, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելով՝ ակնհայտ անհարգալից վերաբերմունք են դրսևորել Դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ, ուստի՝ նրանց նկատմամբ պետք է կիրառել պատասխանատվության ենթակելու վերաբերյալ դիմումով ՀՀ փաստաբանների պալատին դիմելու սանկցիա:

**2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 07.02.2018թ. թիվ 39-Ա/ԿԳ-18006 որոշմամբ փաստաբաններ Հայարփի Սարգսյանի, Դավիթ Գյուրջյանի, Մուշեղ Շուշանյանի, Արայիկ Պապիկյանի և Հարություն Բաղդասարյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

12.02.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

**3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>**

**<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>**

Դիմողը 22.03.2018 թվականին ներկայացրել է թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով 09.01.2018 թվականի դատական նիստի ձայնագրառման կրիչը:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

**<u>3.2. Պատասխանողների համառոտ բացատրությունները.</u>**

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանող Հայարփի Սարգսյանը 06.03.2018թ. ներկայացրել է բացատրություն, որում հայտնել է հետևյալը.

Մինչև Դատարանի կողմից 15 րոպե տևողությամբ ընդմիջում հայտարարելը Պատասխանողների պաշտպանյալները հայտարարել են, որ պահանջում են իրենց հացադուլավոր ընկերներին՝ Արմեն Բիլյանին և Սմբատ Բարսեղյանին ապահովել մարդկային պայմաններով և մինչև այդ պահանջի կատարումը ցանկանում էին լքել դատական նիստերի դահլիճը:

Ինչպես և բոլոր ամբաստանյալները, Հայարփի Սարգսյանի պաշտպանյալը ևս հայտնել է Սարգսյանին, որ կհրաժարվի իր փաստաբանական ծառայություններից, եթե Սարգսյանն իր բացակայության ընթացքում մնա դատական նիստերի դահլիճում:

Դատարանը, ոտնահարելով Պատասխանողների պաշտպանյալների խոսքի ազատության իրավունքը, նախ՝ խոսելու հնարավորություն չի ընձեռել իրենց բոլոր պաշտպանյալներին՝ այդպիսով խեղաթյուրելով այն փաստը, որ այդ բողոքի ձայնը բոլորինն է և որակել է այնպես, թե իբր դա մեկ ամբաստանյալի խոսքն է: Բացի այդ, ըստ Պատասխանող Հայարփի Սարգսյանի, Դատարանը խոսքի իրավունքից զրկել է նաև իրեն՝ թույլ չտալով կարծիք հայտնել փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի հայտարարության վերաբերյալ և արագ հեռացել է՝ այդպիսով Հայարփի Սարգսյանի նկատմամբ դրսևորելով անհարգալից վերաբերմունք: Դատարանն ինքն իրեն հակասել է՝ մի դեպքում ընդունելով, որ դատական նիստերի դահլիճը լքելը նման պարագայում ամբաստանյալների իրավունքն է, մյուս դեպքում նրանց նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ մի քանի ժամով նրանց դատական նիստերի դահլիճից հեռացնելով:

Բացի այդ, ըստ Պատասխանողի, Դատարանը, մի կողմից ժամը 12:39-ին Պատասխանողների բացակայությունը դիտել է անհարգալից վերաբերմունք, սակայն, մյուս կողմից, ընդունել է այն հանգամանքը, որ աշխատակազմին Պատասխանողների կողմից հասցեագրված դիմումը տրվել է ժամը 13:00-ին, այսինքն՝ գրասենյակի աշխատակցի կողմից ուշացմամբ: 18.06.2018թ. Պալատ է մուտքագրվել Պատասխանողի դիմումը, որում հայտնվել է հետևյալը: Պատասխանողի խոսքով, Պատասխանողներն իրենց դիմումը 12:30-ից փորձել են մուտքագրել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան, որտեղ արտագնա կարգով ընթանում էր նշված դատավարությունը, մինչդեռ, գրասենյակի աշխատակցուհին մի քանի րոպե մտածում էր ընդունել Պատասխանողների դիմումը, թե՝ ոչ: Բացի այդ, դիմումը 12:35-ին աշխատակցուհին արդեն իսկ վերցրել էր, իսկ դիմումի պատճենը՝ ստորագրությամբ և 12:40 գրառմամբ Պատասխանողներին տրամադրվել է այն հասցեատիրոջը տրամադրելուց հետո: Ըստ Պատասխանողի՝ միայն այն փաստը, որ դիմումի վրա առկա է 12:40 գրառում, դա արդեն հիմք է Դիմողի սանկցիան կասկածի տակ դնելու համար, քանի որ ըստ Դիմողի՝ դիմումը դատարանի գրասենյակ մուտքագրվել է 12:45-ին: Բացի այդ, Պատասխանողներն իրենք են դատարան մուտք արել դիմում, որում նշվել է

դատական նիստերի դահլիճ չներկայանալու պատճառը, ինչը հերքում է Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի փաստը, քանի որ Դատարանն ինքն է Դատական սանկցիայում նշել, որ Պատասխանողների բացակայության պատճառը պարզելու համար 12:42-ին ևս հայտարարել էր ընդմիջում 10 րոպե ժամանակով:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, թե դիմումով իբր հիմնավորվում է Պատասխանողների ներկայությունը Դատարանի շենքում, ինչը կարող է դիտվել որպես Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափում, դա արդյունք է Դատարանի աշխատակիցների կողմից ժամերի և րոպեների սխալ գրառումների, քանի որ Պատասխանողները 12:30-ից գտնվել են Դատարանի գրասենյակում և փորձել են մի քանի րոպե մուտքագրել նշված դիմումը, որն ընդունվել է ուշացմամբ: Պատասխանողը որպես իրենց կողմից Դատարանի գրասենյակում ավելի վաղ գտնվելու հանգամանքի ապացույց վկայակոչել է Պատասխանողների 09.01.2018թ. դիմումը: Բացի այդ, ըստ Պատասխանողի, պետք է տարանջատել դատարանի շենքը՝ լայն իմաստով և դատարանի գրասենյակը՝ որպես դատարանի շենք՝ նեղ իմաստով, քանի որ գտնվելով Դատարանի գրասենյակում՝ Պատասխանողները չէին կարող գտնվել Դատարանի դահլիճում, բայց կարող էին գտնվել Դատարանի շենքում:

Պատասխանողը գտնում է, որ Դատական սանկցիան անհիմն է, ուստի՝ հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճվի:

Մյուս Պատասխանողները բացատրություն չեն ներկայացրել:

Խորհրդի նիստին ներկայացել է Պատասխանող Արայիկ Պապիկյանը, սակայն չի մասնակցել կարգապահական գործի քննությանը:

Մյուս Պատասխանողները չեն ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել են Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

**3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>**

12.04.2018թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանը կազմել է եզրակացություն, որի համաձայն՝ հաստատված է համարել հետևյալ փաստերը՝

1. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ դատավոր Ա. Օհանյանի, քարտուղարությամբ՝ Ն. Ղազարյանի, մասկացությամբ՝ մեղադրող դատախազներ՝ Հ. Ենոքյանի և Ա. Չախոյանի, պաշտպաններ Հ. Սարգսյանի, Դ. Գյուրջյանի, Մ. Շուշանյանի, Ա. Պապիկյանի և Հ. Բաղդասարյանի, քարգմանիչ՝ Ա. Հովհաննիսյանի, դռնբաց դատական նիստում քննության է առել թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործը:

2. Նշված գործով ամբաստանյալ Հովհաննես Հարությունյանի պաշտպանությունը ստանձնել է փաստաբան Հայարփի Սարգսյանը, ամբաստանյալներ Արամ Հակոբյանի և Վարդան Գերավետյանի պաշտպանությունը ստանձնել է փաստաբան Դավիթ Գյուրջյանը, ամբաստանյալներ Տիգրան Մանուկյանի, Թորոս Թորոսյանի, Մարտիրոս Հակոբյանի,

Արայիկ Հակոբյանի և Սերգեյ Կյուրեղյանի պաշտպանությունը ստանձնել է փաստաբան Մուշեղ Շուշանյանը, ամբաստանյալներ Թաթուլ Թամրազյանի և Գևորգ Իրիցյանի պաշտպանությունը ստանձնել է փաստաբան Արայիկ Պապիկյանը, ամբաստանյալ Արամ Մանուկյանի պաշտպանությունը ստանձնել է փաստաբան Հարություն Բաղդասարյանը:

3. 09.01.2018թ. ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին ամբաստանյալ Մարտիրոս Հակոբյանը դատական նիստերի դահլիճ մտնելուց հրաժարվելու և այդ կերպ դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու և նախագահողի օրինական կարգադրությունները չկատարելու միջոցով Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու հիմքով ենթարկվել է նիստերի դահլիճից 4 ժամով հեռացվելու դատական սանկցիայի:

4. Նույն օրը կայացած դատական նիստի ընթացքում հայտարարությամբ հանդես է եկել գործով ամբաստանյալ Տիգրան Մանուկյանը հայտնելով հետևյալը՝ *Դատական նիստը չի կայանալու, իր ընկերները գտնվում են հացադուլի մեջ և քանի որ նրանց խնդիրը լուծված չէ, դատական նիստին ինքն անձնապես չի ուզում մասնակցել և չի ցանկանա, որ իր պաշտպանը ներկա լինի դատարանի դահլիճում իր բացակայության ընթացքում, այնպես որ ինքը լքելու է դատարանի դահլիճը, նախօրոք ասելով և առանց մեկնաբանությունների պատրաստվում է լքել դահլիճը, արդեն պատճառն ասել է, նիստը չի կայանա, իրենք թույլ չենք տա, որ նիստը շարունակելու պլանն իրագործվի*:

5. Ամբաստանյալ Վարդան Գերավետյանը գործով ամբաստանյալների անունից հանդես է եկել հայտարարությամբ այն մասին, որ իրենց երեք ընկերները գտնվում են հացադուլի մեջ ու պահվում են անմարդկային պայմաններում, և որպես բողոքի ձայն իրենք լքելու են դատական նիստերի դահլիճն այդ ընթացքում հայտարարելով նաև, որ իրենք հրաժարվում են պաշտպանների ծառայություններից:

6. Ամբաստանյալ Գերավետյանի հայտարարությունից հետո նախագահող դատավորի կողմից չի բավարարվել դատական նիստի դահլիճը լքելու ամբաստանյալների պահանջը, որից հետո վերջիններս, առանց Դատարանի համապատասխան կարգադրության և թույլտվության, ձեռնամուխ են եղել լքելու նիստի դահլիճը, ինչի հիման վրա նրանց նկատմամբ կիրառվել է նիստերի դահլիճից հեռացնելու դատական սանկցիա:

7. Ամբաստանյալ Թորոս Թորոսյանն իր պաշտպանից հրաժարվելու վերաբերյալ արտահայտություն է արել, որի իրավական գնահատականին Դատարանն անդրադարձել է փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի վերաբերյալ դատական սանկցիա կիրառելու որոշմամբ:

8. Ամբաստանյալ Տիգրան Մանուկյանը, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու նիստի կարգը խախտող գործողություններ կատարելու, այն է՝ առանց Դատարանի թույլտվության դատական նիստի դահլիճը լքելու նպատակով անվտանգությունն ապահովող ծառայողների զբաղեցրած ճանապարհն ազատելու պահանջներ ներկայացնելու, այլաբնույթ հայտարարություններ անելու, այդ թվում «հանձնարարությունը, որ նիստեր կայանա, չի լինելու, մենք գործիք չենք դառնալու» և իրարանցում առաջացնելու պատճառով դատարանի արձանագրային որոշմամբ ժամը 12:11-ին ենթարկվեց նախազգուշացման ձևով դատական սանկցիայի:

9. Դատական նիստի կարգը կրկին խախտելու և նախագահողի օրինական կարգադրություններին չենթարկվելու դեպքում նիստի դահլիճից հեռացվելու հնարավորության մասին Դատարանի կողմից ամբաստանյալներին արված

բացատրություններից հետո նրանցից Տիգրան Մանուկյանը շարունակել է նույնական վարքագիծ դրսևորել, ինչի պատճառով վերջինս Դատարանի արձանագրային որոշմամբ ժամը 12:13-ին ենթարկվել է առավել խիստ՝ նիստերի դահլիճից 5 ժամով հեռացվելու դատական սանկցիայի:

10. Ամբաստանյալ Տիգրան Մանուկյանի նկատմամբ կիրառված դատական սանկցիայի հիման վրա վերջինիս, ոստիկանության ուղեկցող գումարտակի աշխատակիցների ուղեկցությամբ դատական նիստերի դահլիճից հեռացվելու ընթացքում, դահլիճում ներկա մյուս ամբաստանյալները, չենթարկվելով նախագահողի՝ դատական նիստերի դահլիճը չլքելու կարգադրությանը, սկսել են աղմկելով ինքնակամ լքել նիստի դահլիճը:

11. Ամբաստանյալների դրսևորած այդօրինակ վարքագծի, նախագահողի օրինական կարգադրություններին չենթարկվելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու և նիստի կարգը խախտելու պատճառաբանություններով Դատարանը ժամը 12:14-ին արձանագրային որոշմամբ դատական նիստին ներկա ամբաստանյալներ Արամ Մանուկյանի, Հովհաննես Հարությունյանի, Թաթուլ Թամրազյանի, Արայիկ Հակոբյանի, Վարդան Գերավետյանի, Արամ Հակոբյանի, Սերգեյ Կյուրեղյանի, Գևորգ Իրիցյանի, Թորոս Թորոսյանի նկատմամբ ևս նիստերի դահլիճից 5 ժամով հեռացվելու դատական սանկցիա է կիրառել:

16. Հայտարարված ընդմիջումից հետո՝ ժամը 13:07-ին, գործի քննությունը շարունակելու համար Դատարանը վերադարձել է, սակայն նիստերի դահլիճ փաստաբաններ Հ. Սարգսյանը, Դ. Գյուրջյանը, Մ. Շուշանյանը, Ա. Պապիկյանը և Հ. Բաղդասարյանը չեն ներկայացել:

17. Հայտարարված ընդմիջման ընթացքում Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի գրասենյակ ժամը 12:45-ին ստացվել է փաստաբաններ Հ. Սարգսյանի, Դ. Գյուրջյանի, Մ. Շուշանյանի, Ա. Պապիկյանի և Հ. Բաղդասարյանի կողմից կազմված միասնական դիմումը, որը աշխատակիցների կողմից ժամը 13:00-ին հանձնվել է դատավորի աշխատակազմին:

18. Դիմումն ունեցել է հետևյալ բովանդակությունը՝ *Հարգելի՛ դատարան, սույնով հայտնում ենք, որ այսօր 09.01.2018թ.-ի դատական նիստի ժամանակ մեր պաշտպանյալները լքեցին դատական նիստերի դահլիճը՝ միաժամանակ հայտարարելով, որ հրաժարվում են մեր փաստաբանական ծառայություններից՝ դատական նիստի ժամանակ իրենց բացակայությամբ: Ուստի՝ չենք կարող և իրավասու չենք մասնակցել դատական նիստին:*

19. Դատարանը փաստաբաններ Հ. Սարգսյանի, Դ. Գյուրջյանի. Մ Շուշանյանի, Ա Պապիկյանի և Հ. Բաղդասարյանի վարքագիծը գնահատելու և դատական սանկցիա կիրառելու հարցը քննարկելու վերաբերյալ դատական ակտ կայացնելու համար հեռացել է խորհրդակցական սենյակ, ապա վերադառնալով՝ հրապարակել է որոշումը վերջիններիս նկատմամբ պատասխանատվությունն ենթարկելու վերաբերյալ դիմումով ՀՀ փաստաբաններին պալատին դիմելու դատական սանկցիա կիրառելու մասին:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 13.04.2018թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի սեպտեմբեր 13-ին, ժամը՝ 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. **<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ նաև Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

***Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝***

- Թիվ ԵԷԴ/0090/01/17 գործով փաստաբաններ Հայարփի Սարգսյանը, Դավիթ Գյուրջյանը, Մուշեղ Շուշանյանը, Արայիկ Պապիկյանը և Հարություն Բաղդասարյանը հանդիսացել են պաշտպաններ:

- Թիվ ԵԷԴ/0090/01/17 գործով 09.01.2018թ. դատական նիստում ամբաստանյալներ Մարտիրոս Հակոբյանի, Տիգրան Մանուկյանի, Վարդան Գերավետյանի, Հովհաննես Հարությունյանի, Թաթուլ Թամրազյանի, Արայիկ Հակոբյանի, Վարդան Գերավետյանի, Արամ Հակոբյանի, Սերգեյ Կյուրեղյանի, Գևորգ Իրիցյանի, Թորոս Թորոսյանի նկատմամբ Դատարանի կողմից կիրառվել է նիստերի դահլիճից հեռացնելու դատական սանկցիան:

- Հայտարարված ընդմիջման ընթացքում Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի գրասենյակ ժամը 12:45-ին ստացվել է փաստաբաններ Հայարփի Սարգսյանի, Դավիթ Գյուրջյանի, Մուշեղ Շուշանյանի, Արայիկ Պապիկյանի և Հարություն Բաղդասարյանի կողմից կազմված միասնական դիմումը, որն աշխատակիցների կողմից ժամը 13:00-ին հանձնվել է դատավորի աշխատակազմին: Դիմումով փաստաբանները հայտնել են՝ *(...) այսօր՝ 09.01.2018թ. դատական նիստի ժամանակ մեր պաշտպանյալները լքեցին դատական նիստերի դահլիճը՝ միաժամանակ հայտարարելով, որ հրաժարվում են մեր փաստաբանական ծառայություններից՝ դատական նիստի ժամանակ իրենց բացակայությամբ: Ուստի՝ չենք կարող և իրավասու չենք մասնակցել դատական նիստին*:

- Փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի վարքագիծը գնահատելու և դատական սանկցիա կիրառելու հարցը քննարկելու վերաբերյալ դատական ակտ կայացնելու նպատակով Դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ՝ հայտարարելով, որ դատական ակտը կհրապարակվի 15 րոպեից:

- Հայտարարված ընդմիջումից հետո դատական նիստը վերսկսվել է, սակայն նիստից բացակայել են փաստաբաններ Հայարփի Սարգսյանը, Դավիթ Գյուրջյանը, Մուշեղ Շուշանյանը, Արայիկ Պապիկյանը և Հարություն Բաղդասարյանը, որոնց մասնակցությունն ապահովելու համար Դատարանը նիստն ընդմիջել է 10 րոպեով, որից հետո դատական նիստը վերսկսելով՝ Դատարանի կողմից պարզվել է, որ փաստաբանները կրկին բացակայում են:

*Նշված փաստերը հաստատվում են գործի նյութերով, այդ թվում՝ Որոշմամբ, դատական նիստի ձայնագրությամբ, Պատասխանող Հայարփի Սարգսյանի 06.03.2018թ.*

*բացատրությամբ, 09.01.2018թ. Դատարան ներկայացրած դիմումով:*

6. **<u>Պատասխանողների անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝

- Փաստաբան Հայարփի Սարգսյանը փաստաբան է հանդիսանում 25.04.2015թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ՝ չհաշված սույն կարգապահական վարույթը: Նշված կարգապահական վարույթը գտնվում է ընթացիկ փուլում.

- Փաստաբան Դավիթ Գյուրջյանը փաստաբան է հանդիսանում 25.04.2015թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 10 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (10 ավարտված վարույթ), որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական վարույթը:

- Փաստաբան Արայիկ Պապիկյանը փաստաբան է հանդիսանում 24.10.2009թ-ից, և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 22 կարգապահական վարույթ (21 ավարտված և 1 ընթացիկ վարույթ), որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական վարույթը:

- Փաստաբան Հարություն Բաղդասարյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 6 կարգապահական վարույթ (6 ավարտված), որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական վարույթը:

- Փաստաբան Մուշեղ Շուշանյանը փաստաբան է հանդիսանում 28.02.2000թ-ից, և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 17 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (15 ավարտված վարույթ և 2 ընթացիկ վարույթ), որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական վարույթը:

7. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

***Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբաններ Հայարփի Սարգսյանը, Դավիթ Գյուրջյանը, Մուշեղ Շուշանյանը, Արայիկ Պապիկյանը և Հարություն Բաղդասարյանը ենթակա են կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար, իսկ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.***

**<u>7.1 Կանոնագրքի 4.1 կետի մասով.</u>**

**Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝** *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

**Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝** *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում*

*հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Այս կանոնը վկայակոչող է և հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին **(այսուհետ նաև՝ ՔԴՕ**):

**ՔԴՕ-ի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝** *պաշտպանը պարտավոր է՝*

*(…)*

*2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.*

*3) մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.*

*4) դատական նիստում պահպանել կարգուկանոն*

*(…):*

Վերլուծելով վերը նշված կանոնների պահանջները, Խորհուրդը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն հանգամանքը, թե.

**արդյո՞ք Պատասխանողներն *առանց հարգելի պատճառի դատական նիստին չեն ներկայացել՝ դրանով անհարգալից վերաբերմունք դրսևորելով Դատարանի նկատմամբ*:**

Ըստ հաստատված փաստերի ԵԷԴ/0090/01/17 գործով 09.01.2018թ. տեղի ունեցած դատական նիստում Դատարանի որոշմամբ Պատասխանողների պաշտպանյալները հեռացվել են դատական նիստերի դահլիճից: Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում Պատասխանողների մասնակցությունը վերսկսված դատական նիստին դառնում է պարտադիր, մինչդեռ, Պատասխանողները Դատարանի կողմից հայտարարված ընդմիջումից հետո դատական նիստերի դահլիճ չեն վերադարձել և դատական նիստին չեն մասնակցել: Պատասխանողներն իրենց բացակայությունը հիմնավորել են այն հանգամանքով, որ իրենց պաշտպանյալները հրաժարվել են Պատասխանողների ծառայություններից՝ դատական նիստի ժամանակ իրենց բացակայությամբ: Սակայն, գործում առկա ապացույցները չեն վկայում այն մասին, որ ամբաստանյալները կամ նրանցից որևէ մեկը հրաժարվել են Պատասխանողների ծառայություններից: Ըստ գործում առկա ապացույցների ամբաստանյալ Տիգրան Մանուկյանը հայտարարել է, որ չի ցանկանա, որ իր պաշտպանը ներկա լինի իր բացակայության ժամանակ: Մինչդեռ, պաշտպանից հրաժարվելու ամբաստանյալի ակտը պետք է լինի անվերապահ, այսինքն՝ չպետք է պայմանավորված լինի որևէ հանգամանքի առկայությամբ կամ բացակայությամբ: Այսպես.

**ՔԴՕ-ի 68-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի համաձայն՝** *պաշտպանը դադարում է որպես այդպիսին մասնակցել քրեական գործով վարույթին, եթե մեղադրյալը լուծել [է] նրա հետ ունեցած համաձայնությունը [կամ] քրեական վարույթն իրականացնող մարմինը …ընդունել է … մեղադրյալի հրաժարումը պաշտպանից:*

ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով «Իրավաբանական օգնությունից, այն է՝

պաշտպան ունենալուց կամ նշանակված պաշտպանից հրաժարվելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով թույլատրելի դեպքերին», 29"06"2009թ" թիվ ԵՔՐԴ/0436/01/08 որոշմամբ արձանագրել է, որ իրավաբանական օգնությունից օգտվելու, այն է՝ պաշտպան ունենալու վերաբերյալ անձի հստակ և կամավոր արտահայտած ցանկությունը պարտադիր է վարույթն իրականացնող մարմնի համար, մասնավորապես նշելով, որ՝ «վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի հրաժարումը պետք է ընդունվի միայն այն դեպքում, երբ, հաշվի առնելով անձի տարիքը և հետազոտելով պաշտպանության իրավունքից նրա հրաժարվելու դրդապատճառները, վարույթն իրականացնող մարմինը կգա այն համոզման, որ.

ա) նման ցանկություն նա հայտնել է ինքնակամ, սեփական նախաձեռնությամբ և այն պարտադրված չէ գործի քննության հանգամանքներով,

բ) նա կարողանում է ամբողջությամբ գիտակցել իր վարքագծի հետևանքները,

գ) անձն ի վիճակի է ինքնուրույն իրականացնել իր պաշտպանությունը»:

Նշվածից հետևում է, որ նախնական քննության ժամանակ մեղադրյալի, իսկ դատական քննության ժամանակ՝ ամբաստանյալի հրաժարումը պաշտպանի ծառայություններից պետք է լինի որոշակի, այն է՝ հստակ լինի վստահորդի կամահայտնությունը պաշտպանից անվերապահ հրաժարվելու վերաբերյալ, որը կարող է լինել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, սակայն, բոլոր դեպքերում, հրաժարումը պետք է հիմնված լինի կա՛մ գրավոր փաստաթղթի, կա՛մ դատական նիստի արձանագրության, կա՛մ ապացուցման որևէ այլ միջոցի վրա, այսինքն՝ պաշտպանից հրաժարվելու ամբաստանյալի հրաժարման ակտը պետք է ակնհայտ լինի: Խորհուրդն արձանագրում , որ սույն կարգապահական գործում առկա չեն Պատասխանողների ծառայություններից ամբաստանյալների հրաժարման վերաբերյալ ապացույցներ, իսկ Պատասխանողների կողմից Դատարան ներկայացված դիմումը, որով Պատասխանողները հայտնել են, որ պաշտպանյալները հրաժարվել են Պատասխանողների ծառայություններից՝ դատական նիստի ժամանակ իրենց բացակայությամբ և ամբաստանյալ Տիգրան Մանուկյանի բանավոր հայտարարությունը, որ ինքը չի ցանկանա, որ իր պաշտպանը ներկա լինի իր բացակայության ժամանակ, Խորհուրդը չի կարող դիտարկել որպես Պատասխանողների ծառայություններից հրաժարում:

***Պալատի խորհուրդը կարևոր է համարում սույն որոշմամբ տալ այն հարցի պատասխանը, թե՞ արդյոք դատական նիստին չմասնակցելու վստահորդի հանձնարարությունը օրինական հանձնարարություն է, և արդյո՞ք փաստաբանը պարտավոր էր կատարել այդ հանձնարարությունը:***

**ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ <u>օրենքով չարգելված բոլոր միջոցներով:</u>*

**Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝** *պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով:*

**«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի առաջին պարբերության**

**համաձայն՝** *«Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած անձի հանձնարարությունն ընդունելու, եթե՝*

*1) այն ակնհայտ անօրինական բնույթ է կրում.*

*(…)»*

**Կանոնագրքի 3.1.6 ենթակետի համաձայն՝** *Եթե վստահորդի հանձնարարությունը և նրա համար ցանկալի արդյունքի հասնելու միջոցները օրինական չեն, ապա փաստաբանը պետք է վստահորդին պարզաբանի դրանց կիրառման անթույլատրելիության մասին և ցույց տա նույն կամ նման արդյունքի հասնելու հնարավոր օրինական ճանապարհը, և եթե այդուհանդերձ չի հաջողվում վստահորդի հետ համաձայնության գալ և նրան հետ պահել անօրինական միջոցների կիրառման մտադրությունից, ապա <u>փաստաբանը պարտավոր է հրաժարվել վստահորդի հանձնարարությունը ընդունելուց:</u>*

Նշված կանոնների համակարգային վերլուծությունից ուղղակիորեն հետևում է, որ քրեական գործով պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով, հետևաբար օրենքով արգելվող այդպիսի վարքագիծ դրսևորելուն ուղղված վստահորդի հանձնարարությունն օրինական չի կարող լինել: Ոչ օրինական հանձնարարությունն ընդունելուց փաստաբանը պարտավոր է հրաժարվել: Փաստաբանն իրավունք չունի և չպետք է վստահորդից այնպիսի հանձնարարություն ընդունի, եթե ի սկզբանե այն հակասում է օրենքին կամ վարքագծի կանոններին:

Վստահորդի ոչ օրինական հանձնարարությունը փաստաբանի համար պարտադիր համարելու դեպքում, փաստաբանը կկորցնի իր անկախությունը և ստիպված կլինի ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորել, ինչն անթույլատրելի է:

Պալատի խորհուրդը եզրակացնում է, որ Պատասխանողների արարքը կատարված է դիտավորությամբ, այսինքն՝ վերջինս գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործով Պատասխանողներն առանց հարգելի պատճառի դատական նիստին չեն ներկայացել, հետևաբար դիտավորությամբ այդպիսի վարքագիծ դրսևորելով խախտել է Կանոնագրքի 4.1 կետի պահանջը:

**Կարգապահական տույժի ընտրությունը**

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Պալատի խորհուրդը՝ հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը և փաստաբանների անձը բնութագրող հանգամանքները, գտնում է, որ Պատասխանողների նկատմամբ պետք է կիրառվի «նկատողություն» կարգապահական տույժը:

**7.2 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով.**

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը*

*Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Սույն իրավադրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանը, ելնելով իր իրավապաշտպան գործառույթից, պարտավոր է դրսևորել իր նշված գործառույթով պայմանավորված հասարակական հատուկ կարգավիճակին հարիր ազնիվ վարքագիծ վստահորդի հետ հարաբերություններում և առավելագույն ջանքեր գործադրել իր վստահորդի շահերը բոլոր օրինական միջոցներով պաշտպանելու ուղղությամբ:

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեր Պատասխանողների կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում թույլ տալու հանգամանքը:

Ուստի՝ Խորհուրդը գտնում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

***1. Փաստաբան Հայարփի Սարգսյանին (արտոնագիր՝ թիվ 1926), Դավիթ Գյուրջյանին (արտոնագիր՝ թիվ 1897), Մուշեղ Շուշանյանին (արտոնագիր՝ 387), Արայիկ Պապիկյանին (արտոնագիր՝ 970) և Հարություն Բաղդասարյանին (արտոնագիր՝ 1187) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար:***

***2. Փաստաբան Հայարփի Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 1926), Դավիթ Գյուրջյանի (արտոնագիր՝ թիվ 1897), Մուշեղ Շուշանյանի (արտոնագիր՝ 387), Արայիկ Պապիկյանին (արտոնագիր՝ 970) և Հարություն Բաղդասարյանի (արտոնագիր՝ 1187) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:***

***3. Կարգապահական վարույթը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի մասով կարճել:***

***4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

***<u>Ծանոթություն.</u>*** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սեդրակ Ասատրյան

**13 սեպտեմբերի 2018թ.**
**թիվ ԿԳ/204-Ա**

**ք. Երևան**